ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«ԴԱՊ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ք.Դիլիջան

09 ապրիլի 2018թ.
ժամը 10 00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Կ.Գրիգորյան	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտության, մշտադիտարկման, զբոսաշրջության և իրազեկման բաժնի պետ-տնօրենի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
Հանձնաժողովի անդամներ Բ.Սարգսյան	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահպանության բաժնի պետ-տնօրենի տեղակալ, գնահատող անդամ
Լ.Աբազյան	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի իրավաբան, գնահատող անդամ
Լ.Դանիելյան	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահեստապետ, գնահատող անդամ
Հանձնաժողովի քարտուղար Ա.Դիլանյան	«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գնումների մասնագետ-տնտեսագետ

1. «ԴԱՊ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման նիստի.

(Կ.Գրիգորյան)

1.1 Հաշվի առնելով «Արթուր Սիմոնյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի հիմա վրա «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման համար հայտարարված «ԴԱՊ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, ինչպես նաև այն հանգամանքը, որ 05.04.2018թ.-ին հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ նշված ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակից «Արթուր Սիմոնյան» Ա/Ձ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ որոշմամբ սահմանված ժամետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից սահմանված ժամկետում դրական եզրակացություն չի ստացվել: Համաձայն 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ որոշման «Արթուր Սիմոնյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացրած տվյալները համարվում են իրականությանը համապատասխանող:

2. Հանձնաժողովը որոշեց՝

2.1 «Արթուր Սիմոնյան» Ա/Ձ-ին «ԴԱՊ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչել և ընկերությանը ներկայացնել «Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների գնման» պայմանագրի կնքման առաջարկ:

2.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ անգործության ժամկետ չի սահմանվում:

3. Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝

Կ.Գրիգորյան

Հանձնաժողովի անդամներ՝

Բ.Սարգսյան

Լ.Աբազյան

Լ.Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Դիլանյան